


0469-6196 1914 Հ/Տ 1020.

ՅՈՒՆԻՎԵՐՍԻՏԵՏ



ԳՐԻԳՈՐ ՔԱՅ. ԳՈՐԳԵԱՆՑ



Բ. ԳԻՐԻ

ԶԱՏԻԿԸ ԲԵՐԱԿ

(Արտապահ «Ալբիւր»-ից)

••••• @ •••••

ՎԻՃԱԿՈՒԹԵԱ
ԻԽԱԿՈՒԹԱ
ՅՈՒՆԻՎԵՐՏԵՏԻ
Ակադեմիա Խոշ
СССР

ԹԻՖԼԻԶ

Տպ. Ն. Աղանեսին, Պօլից. 7

1914

891.995

Գ-81



80204-63

DF 12

891-335 Գարզին
գ 81 Ցուցրդիչ պատճեն

ԱՀՕ	1/10 - 38		

ՊԿ չ. 243 թ. 3.000.000

6176

891-335

9-81

ՅՈՒՆԻՎԵՐՍԻՏԵՏԻ



Բ. ԳԻՐԵ

ԶԱՏԻԿԸ ԲԵՐԱԿ

(Արտապահ «Ալբիւր»-ից)



Թ Ի Ֆ Լ Ի Ռ
 Տպ. Ն. Աղամենի, Պոլիգ. 7.
 1914

15 APR 2014

7937

ՅՈՒՆԻՎԵՐՍԻՏԵՏ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ

ՀԱՅԻ Դ



60204-67

Դաստիարակության համար հայոց ժողովություն
պայմանագրությունը և նախագոր միջազգային
բանակցությունը պարագանելու արքայի գլուխ
ու առաջ հայությունը ու առաջ գլուխ
ու առաջ հայությունը ու առաջ գլուխ

Շաբաթ էր: Մի գեղեցիկ գարնա-
նային օր: Գիւղը վաղուց էր զարթնել:
Նրա մէջ մի արտասովոր կենդանու-
թիւն էր տիրում: Վաղը Ծաղկազարդ
էր, հարկաւոր էր պատրաստութիւններ
տեսնել գարնան անդրանիկ տօնին փա-
ռահեղ գիմաւորելու համար:

Հարսները մեծ-նաճի հսկողութեան
տակ, աները մաքրում էին ձմեռայ
կեղտ ու մուրից և աշխատում էին նա-
նի պատւէրի համաձայն կատարել ամեն
ինչ: Աղջիկները խումբ-խումբ թեթև
տւած, իրար առաջ կարելով շտապում
էին դէպի աղքիւրը. նրանք մաքրելու
ջուր էին կրում: Ծերերը ծալապատիկ

սրաններում նստած՝ թռոնիկների տը-
րեխներն էին գործում ու կանաչ-կար-
միր կապեր անցկացնում։ Նրանք, որոնց
կարը թերի էր մնացել՝ ջանում էին ա-
ւարտել, որ նոր հազուստով դիմաւո-
րեն եկող տօնին։ Կալերում, ծուռ ու
մուռ փողոցներում, հրապարակներում,
մի խառնւած երեխաների սրտագին
ճիշն ու աղաղակները, ճռանների միա-
ղաղաղ հնչւող ձայնը զիւղի կենդանու-
թեան պակասը լրացնում էր։ Նրան-
ցից երջանիկը նա էր, ով տօնին յար-
մար զգեստ ունէր և իր ճռանը զիւ-
ձայնով յաղթում էր միւսների ճռանին։
Իսկ նրանք, որոնք ճռանի շրջանը անց
էին կացրել, առանձին խաղեր էին սար-
քել։ Նրանցից ամեն մէկը ջանում էր
այդ օրը խաղի մէջ յաղթանակել, որ
Ծաղկազարդը նրան անշնորք չըգտնի
ու յաղթւած։

Գիւղի այս արտասովոր կենդա-
նութիւնը ու գրաւիչ տեսարաները չէին
հետաքրքրում Ծովինանի թռո Գէոր-
գին։ Նրա գէմքը մռայլ էր։ Մի ներ-
քին խոր ու տանջող մտածմունք նրան
կաշկանդել էր։ ԽԵղճ։ Նա կանգնել էր
բակում ու իր վշտալից հայեացքը չէր
հեռացնում քաղաք տանող ճանապար-
հից։ Գէորգը մի թանկագին հիւրի էր
սպասում, իր աննման հայրիկին։ Նա
երկու տարի առաջ մնաս բարև ասեց
տանը, ճանապարհ ընկաւ դէպի քաղաք՝
աշխատանքի։ Բայց նա յետ չեկաւ։
Նրանից մի քանի րուրլի փող ստաց-
ւեց, այնուհետև կտրւեց թէ նամակը
և թէ փողը։ Ի՞նչ պատահեց Գէորգի
սրտի հատոր հայրիկին, ո՞ր չար ձեռքը
յափշտակեց նրան, այդ նա անկարող
եղաւ համկանալ։ Ծովինանը շարունակ
խոյս էր տալիս Գէորգի հետ խօսք բաց

անել այդ մասին։ Նա իր մեծ վիշտը թագցնելով սրտի խորքում, աշխատում էր իր տան միակ ճռագ, մօրից որբ մնացած Գէորգին ուրախ պահել, նրա 12 տարեկան կեանքը տան հոգսերով չը ծանրաբեռնել։

Գէորգը անգայայ չէր։ Նա իր մանկական սրտի սպանիչ վշտերի ու մտածմունքների քարացումն որոնում էր դէպի քաղաք ձգւած դաշտերում, սպրերում ու ձորերում, որոնց միջով պիտի գար իր մխիթարիչ հայրիկը Խէղճ։ Նա այդ գիշեր երազում տեսել է նրան։ Գէորգը լաւ էր յիշում երազը։ Հայրը բերել էր քաղաքից նրա համար գոյն զգոյն թելերով չուխայ, արխալուղ, փափախ, գօտի և մի բարձր, շատ բարձր ձայնով ճռան, որի բարակ լեզւակը, ատամնաւոր թոփը, ներկած կոթը մարդու ուշք ու միտք էին, տանում։ Երբ

զարթեց, մի կրծող տխրութիւն պատեց նրան։ Զկար հայրը և ոչ էլ նրա բերած թանկագին ընծաները։ Երազը խաբել էր նրան։ Ահա ինչու Գէորգը մոռացած Ծովինանին, ընկերներին՝ հայեացքը չէր հեռացնում գէպի քաղաք տանող ճանապարհի երկարութեամբ ձգւած սարերից, ձորերից և թաւշեայ դաշտերից։ Նա նստեց իր սովորական տեղը կոլոր քարի վրայ, գլուխն առնելով ձեռքերի մէջ։

— Գէորգ, հէ, Գէորգ։

Դիմաց կալից կանչեց Գէորգի ընկեր Խաչօն և խաղը շարունակեց։

Գէորգը յետ նայեց շեշտակի։ Ծովինանը սրահում ճախարակ էր մանում ու քթի տակ իր սովորական սպանիչ ձայնով մի ինչոր բան մը մնջում։ Երկու տարի էր, նրա համար Ծաղկագարդը չըկար և էլ ոչ մի աղիգ օր։ Եւ ում հա-

մար պատրաստութիւն տեսնէր։ Մեղմ
հովը թևատարած անցնում էր ու
ճախարակի առաջ խնամքով դարձած
բրդէ մալանչների հետ խաղեր սար-
քում։ Կարծես նա ջանում է Ծովի-
նանի վշտերը, կրծող մտածմունքները
ցրել, բայց անգօր գանւելով, իր վրէժը
մալանչներից էր առնում։

Խաչօն մի քանի անգամ էլ կան-
չեց Գէորգին. նրանից պատասխան
Հրատանալով լրեց և մոռացութեան
տւեց նրան։

Գէորգը անշարժ էր ու մոռայլուա-
կարծես մէկը նրան կտակել էր գետնի
հետ։ Նա որոշել էր այդ օրը չըմիանալ
ընկերների հետ. և ի՞նչպէս միանար.
չուխէն կարկատաններով նախշած, ար-
խալուզը ձերիկ-ձերիկ, փափախն ու տը-
րեխներն էլ ծակոտիկներով ծրծրած և
գուրկ Ծաղկազարդի ճանապարհը բա-

նող ճռանից։ Նա զգում էր, որ իր ցըն-
ցոտիները երբէք սազական չեն տօնին
և համեմատել չէ կարող իր ընկեր-
ների գոյնզգոյն հագուստներին, որոնք
դաշտում փուած բազմերանգ ծաղիկ-
ների էին նմանում։ Գէորգը կանգնեց։
Նրա թախծալից հայեացըը կրկին ուղ-
ղւեց գէպի քաղաք տանող ճանապարհը։
Արել անցել էր սարերի յետեր։ Դաշ-
տաւորները կամաց կամաց դիմում
էին տուն։ Այդ նշան էր, որ երեկոն
հեռու չէ։ Յետնայեց, Ծովինանը ճա-
խարակը վերցրել էր, մալանչների մնա-
ցորդն էր ժողովսւմ։ Ուշը դարձրեց
գէպի կալերը. ընկերները թողել էին
խաղը, Խեչօի զիւ ձայնը այլևս չէր լըռ-
տում, նա խոռվել էր Գէորգից։ Շըջա-
պար աւելի մոռայլեց. յուսահատու-
թիւնը բոլորովին գերեց Գէորգին։
Այսօր էլ անցաւ, չէ որ դու ա-

սացիր Ծաղկազարդի շաքթին կըզամ։
 Գէորգը խօսքերը ուղղեց հօրը ու
 մտաւ տուն։ Արևի վերջի ճառագայթ-
 ները բարի գիշերի բարեներ էին. տա-
 լիս բարձր սարերին ու լեռներին։ Հով,
 պաղ զեփիւոր անցնում էր և յայտա-
 բարում ամենքին մթան գալուստը։
 Գիւղը քնեց։ Առաւօտը հարկաւոր էր
 շուտ զաքթնել Ծաղկազարդին դիմա-
 ւորելու համար։ Միայն Ծովինանն էր
 արթուն։ Նա գալարւելով իր աղքատիկ
 անկողնում, տանջւում էր անձնատուր
 եղած իր սպանիչ մտքերին։ Գէորգի
 հայրը, քաղաք գնալուց ետ, միշաքի
 վրայ բանտարկւեց։ Նա զուր, ուրիշի
 գործած գողութեան համար պատիժ
 էր կրում։ Այդ գիտէր Ծովինանը,
 բայց ծածկում էր Գէորգից։ Իսկ նա
 էր է ազատւելու բանտից, այդ ոչ
 ոք չըգիտէր։

* * *

Վաղ առաւօտ էր։ Դեռ լուսինը
 մեղմիկ սահում էր իր կաթնանման-
 լոյսը համատաքած սփոելով գիւղի սըբ-
 տին։ Պաղ, զով զեփիւոր միացած ե-
 կեղեցու միապաղաղ հնչւող զանգերի
 թոթուուն ձայնի հետ, թոիչք էր գոր-
 ծում, տնից տուն, բակից բակ, պա-
 տուհանները ու գոները ծեծելով ա-
 մենին ժամ էր հրաւիրում դիմաւորե-
 լու գարնան երկրորդ և մեծ տօնին—
 Կարմիր Զատկին։ Գիւղը կարծես գաղ-
 թում էր։ Մեծ ու փոքր, հարս ու աղ-
 ջիկ, ծեր ու երիտասարդ, ծուռ-մուռ,
 փողոցներից խումբ-խումբ իրար հրե-
 լով, շտապում էին եկեղեցի՝ ժամ ա-
 ռաջ տեղ բռնելու։
 Ծովինանն էլ Գէորգի հետ տնից
 դուրս եկաւ, միալար քայլերը, ուղղեց

դէպի եկեղեցին։ Նառորոշեց այս տարի դիմաւորել Զատկին, հաշտւել նրա հետ, որ իր բանտարկւած Սաքօյին մի գուռը բաց անի, մի ողորմութեան ճար համնի։ Զընգ, զընգ, զընգ։ Հնչւում էին զանգերը, ուրախ-ուրախ թըռթըռուալով ու գիւղի կլիխին պտոյտներ՝ գործում։ Ծովի-նանը զանգերի հնչման տակ երեսին խաչ էր հանում ու վըշտալից հայեացըր երկինք ուղղում։ Մերթ ընդ մերթ լսւում էր զառների մայուններ գիւղի ամեն մի անկիւնից, ու Գէորգի ուշքն ու միտքը տանում կարմիր Զատկի մատաղացուները, որ օր առաջ բերել էին գիւղը։ Մէ մաս, մէ մատ։ Յանկարծ լսւեց շատ մօտիկ։ Գէորգը կանգ առաւ ու մի սպանիչ արձակեց։ Խեղճ. նա յիշեց իր թուխիկ գարունը։ Հայրը գնեց աւագ շաբթին։ Մայրը դեռ կենդանի էր, իսկ հայրը

իրան մօտ, տունը լի ամեն բանով։ Նա սրտի մորմոքումներով յիշեց երազը չուխան, արխալուղը, գօտին, ուժնամանները, իսկ ճռանը... նրա ուշքն ու միտքը տարաւ։

Զընգ, զընգ, զընգ։ նորից թըռթըռացին եկեղեցու զանգերը։ Գէորգը սթափւեց։ Նա մի քանի թըռթչքով հասաւ Ծովի-նանին և դիմեց նրան։

Անան, ապէրը չեկաւ, մեզ այս ամրի էլ խաբեց։

Կըգայ, բալաս, կը գայ, յոյսը մի կտրիլ, կարմիր Զատկիկը մեզ համարմի գուռը բաց կանի, — մորմոքից Ծովի-նանը ու հայեացըր ուղղելով երկինք՝ մի քանի անգամ խաչ հանեց։

Կըգայ, կըգայ, ասում եմ շարունակ, համա մեզ մոռացել է, — պաց Գէորգը մորմոքիչ բայց խռոված ձայնով։

Ծովինանը լուռ էր: Նա անկարող եղաւ պատասխանել Գէորգին: Գէորգի ամեն մի հարցը խոցոտում էր նրա սիրտը:

— «Եկէք ժամ, եկէք ժամ», կրկին լսեց եկեղեցու զանգերի ձայնը ու թռթռալով անցաւ՝ սարերին, ձորերին, դաշտերին ու անտառին և աւետելու Զատկի մուտքը:

Գիւղը տեղաւորւեց եկեղեցում. Ծովինանն էլ Գէորգի հետ մի անկիւնում տեղ բռնեց: Հազարաւոր վառող մոմերը գրաւչական տեսք էին: տալիս եկեղեցու կամարներին: Ժամւորներից շատերը մեղմ ձայնակցում էին տիրացուներին, որոնք խմբւելով, մի ուրախ պատկեր էին թողնում: Ծովինանը իր հայեացքը չէր հեռացնում այրւող մոմերից, որոնք աստիճանաբար փոքրանում էին և հալւածքներ թողնում դէ-

պի գետինը: Նրան թւում էր թէ մոմերն էլ են արտասլում:

Զընգ, զընգ, զընգ: աւելի ուժգին, աւելի թափով հնչեցին զանգերը, խլելով տիրացուների ձայնը: Գէորգին թւաց, որ Զատիկը մտաւ եկեղեցի: Նա մօտեցաւ Ծովինանին, ցանկացաւ իր ենթադրութիւնը ստուգելու. Նրա ցանկութիւնը խլեց իրանց հարեան Մանին:

— Աչքի լոյս, Ծովինանի, տղէդ եկաւ, շուտ հասիր տուն,— ասաց Մանին ու մի տեղ բռնեց:

Գէորգը ժամւորների շարքերը ճեղքելով անյայտացաւ: Ծովինանը մնաց փոքր շւարած, ապա սթափւելով, ուժերը մի տեղ ժողովեց, դիմեց դէպի տուն. Նա գնում չէր, այլ թոչում: Ժամւորների միջով կայծակի արագութեամբ անցաւ, Ծովինանի տղէն ա-

— ասող ին պետքութ բաժ —

ուղարկութ մեջ ընտանիք
գումար ին ասող պետքութ իմ —

մ օրդութ զմանաւութ միջ և
հպատակ շատուր մաս ապահով
պահած առաջ պահած մաս ընտանիք
պահած գլուխ թափառ մաս համար առ

ուղարկութ միջ օրդութ —

ուղ մաս մաս զմանաւութ

ըստ միջ որոնց մաս զմանաւութ
ուղ մաս մաս զմանաւութ մաս մաս

մաս մաս մաս մաս մաս մաս

մաս մաս մաս մաս մաս մաս

մաս մաս մաս մաս մաս մաս մաս



ՀՀ Ազգային գրադարան

NL0395845

7937

Եմ աշխատասիրութիւններ

սպագրութեան

10146

1. Զալտիկ հաւը և ձագմարիկը
«Աղբիւր» 1909թ. № 11
2. Թուխիկին Զատիկը
տարաւ » 1910 » 4
3. Իմաստուն վաղկանը » 1910 » 8
4. Զին և իր բեռը » 1910 » 12
5. Երկու համբոյր » 1911 » 2
6. Փոքրիկ ջաղացաւորը » 1911 » 8
7. Սերմացանը » 1911 » 11
8. Զատիկը բերաւ » 1912 » 3
9. Սովամահ մարալը » 1912 » 3
10. Սաքօյի հրաժեշտը » 1913 » 8
11. Փոքրիկ վիրակապը (ձեռագիր)

ԲԱՅԼՈՎ
ՄԻԱ
ՅՈՒՆԻՑԱԴԵՆԻ
Ակադեմիա Խ.
СССР

ԳԻՆԸ 5 ԿՈՊ.